

Uphug 2

2123


Uphug

hnyneuyute

891.990

U-44

P. 1882



396
891.542-93

ՎԵՐԳԵԱՆԻ ԼՐԱԳՐ-ԳՈՐԾԱՆԱԼՈՒԹԵԱՆ

Ա-44

ՄՐԻՆՔ ՀՈՎՈՒՆԿԱՆ

ԵՐԳԵՐ ՈՏԱՆՈՒՐՆԵՐ ԵՒ ԱՌԱԿՆԵՐ

ընթերցատէր մանուկների համար

ՏԱՆԸ ԵՒ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՈՒՄԸ

ԳՐԵՑ Ղ. ԱՂԱՆԱՆՅ

Արտատպելու իրաւունքը վերապահուած.

ԹԻՖԼԻՍ

ՏՊԱՐԱՆ ՄՈՎՍԻ ՎԱՐԳԱՆՅԱՆՅ ԵՒ ԸՆԳ-

1882

00
3-ԱՂ

891.99 Մ. ԱԿ. 98
Վ-44

ՀՐԱՏ. Գ. ԵՌԷՂԵՐԿԵԱՆԻ ԼՐԱԿՐ. ԳՈՐԾԻՆՈՒԹԵԱՆ

ի քաղաքում և արևելքի մասերում / Վերջին
Յուրաքանչյուր հրատարակումը Վերջին

98 ՄՐԻՆԻ ՀՈՎՈՒՆԿԱՆ

283 Գրքեր, քաղաքային բնակավայրեր
Երկր. ՈՏԱՆԱՆՈՐԵՐ ԵՒ ԱՌԱՎԵՐԸ
- 3 4 5

300 ընթերցատեղ մանուկների համար
8-2Ա

ՏԱՆԸ ԵՒ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՈՒՄԸ

ԳՐԵՑ Գ. ԱՂԱԵԱՆԸ

903

Արտատպելու իրաւունքը պահպանւած.



ԹԻՖԼԻՍ

ՏՊԱՐԱՆ ՄՈՂ.Ս. ԳՐԱԳԱՆՆԵԱՆՆԸ ԵՒ ԸՆԿ.

1882

406

5730

Д озволено цензурою. Тифлисъ, 31 Мая, 1882 года.

Тип. М. Вартаванца и К'. противъ Троиц. церкви.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՊԱՆԿԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՄԱՆՈՒԿՆԵՐԻ

ԱՆԴՐԱՆԻԿ ՊԱՐՏԻԶՊԱՆՈՒՀՈՒՆ

ՏԻԿԻՆ ԾՕՅԻԱ ԲԱԲԱՅԵԱՆԻՆ

ԽՈՐԻՆ ՅԱՐԳՈՆՈՔ

ՆՈՒԻՐՈՒՄ Է

ՀԵԳ.ԻՆԱԿԸ

2004

ԾԻՏՈՒ ԵՒ ԲԱՋԷՆ

Ծիտը ծառին ծլլելում է.

Ծիլ, ծիլ, ծիլ:

Բազէն գրիսին պտրտվում է.

Վսւյ, վսւյ, վսւյ:

Ծիտը լռեց, ծիտը վախեց,

Վսյ, վսյ, վսյ:

Բազէ, թրճռ. բազէ, թրճռ:

Հսյ, հսյ, հսյ:

Բազէն թռաւ,

Բազէն փախաւ,

Ինչ լաւ էլաւ.

Հէ, հէ, հէ:

Ծիտիկ միտիկ, պիճիկ միճիկ,

Պրտպրտուրիկ, չըլպըլտուրիկ,

Իո՛ւ լաւ պրծար չար բազէի

Սուր ճանկերից. հա՛հ հա՛հ հա՛հ.



Ա Ք Ա Ղ Ա Ղ

Աքաղաղը կանչում է.

Ծուղրուղո՞ւ,
Ղո՞ւ, զո՞ւ, զո՞ւ:

Պառաւ նանը զարթնում է.

Տա՛, տա՛, տա՛.
պա՛, պա՛, պա՛:

Աքլար, ինչո՞ւ կանչեցիր,

Ինչո՞ւ նանին զարթեցրիր.

Ա՛խ դո՛ւ դո՛ւ, ա՛յ ջո՛ւ ջո՛ւ.

* * *

Ա՛խ նանի, ջան՛ նանի.

Մեզ մի վեր կացընի,

Թող մի քիչ էլ մնանք,

Քնից լաւ կշտանանք:

Աքլարը շուտ է կանչում,

Աքլարը քեզ է խաբում.

Աքլար, ինչո՞ւ կանչեցիր,

Ինչո՞ւ նանին զարթեցրիր.

Ա՛խ դո՛ւ դո՛ւ,

Ա՛յ ջո՛ւ ջո՛ւ:



Ա Ռ Ա Ի Օ Տ

Արեգակը դուրս է եկել

Պսպղալով,

Շողքը հերթից ներս է ընկել

Շողշողալով,

Ծիտը ծառին կրչկըչում է

Ծըլվըլալով,

Ձորումն առունը քըքըչում է

վըշվըշալով,

Ծոյլ տղայի քունն է տարել

Խռմմիալով,

Տրեխները շունն է տարել

Մըմըռալով:



ՀՈՎՈՒՒ ԱՆԿՈՂԻՆԸ

«Սարի լանջն է մահճակալ,

—Ուխայ, ուխայ, ի՛նչ փափուկ է.

«Չեչոտ քարը՝ գլխակալ,

—Ուխայ, ուխայ, ի՛նչ կակուղ է.

«Մի հին կապերոտ ուսերին,

—Ուխայ, ուխայ ի՛նչ նախշուն է.

«Այս է հովուի անկողին.

—Ուխայ, ուխայ, ի՛նչ սիրուն է..

* *

«Երբ անձրեւ է կաթկաթում,

—Կաթկաթում.

«Եւ կապերտը թըխկթըխկում,

—Թըխկթըխկում:

«Հովիւն անուշ քնի մէջ,

—Կարպետում.

«Քաղցր երազ է տեսնում:

—Եւ խնդում, ծիծաղում:

Ուխայ, ուխայ, սիրուն հովիւ,

Քունդ անուշ:

Ա Ր Ե Ի.

Արեւ, արեւ, ե՛կ, ե՛կ,

Զիզի քարին վէ՛ր եկ:

* *

Սեւեւ ամպեր հեռացէք,

Արեւին ճանպայ տուէք,

Թողէք դա գայ մե՛զ մտ,

Ի՛րբա լոյսին ենք կարօտ:

Կարմիր արեւ, ե՛կ ե՛կ,

Նախշուն քարին վէ՛ր եկ:

* *

Արեւը յաղթեց ամպերին,

Շողքը ձրգեց սարերին.

Զիզի քարը տե՛ս, տե՛ս:

Պրսպրզում է ոսկու պէս

Սիրուն արեւ, մի՛շտ ե՛կ,

Զիզի քարին վէ՛ր եկ:

Ճ Ա Խ Ա Ր Ա Կ

Մանիր՝ մանիր՝ իմ՝ ճախարակ,
Մանիր սիպտակ մալանչներ,
Մանիր թելեր հաստ ու բարակ,
Որ ես հոգամ իմ՝ ցաւեր:

* * *

Ձէթ եմ ածել ականջներըդ,
Նոր շինել եմ շրտուիկ,
Դէ՛հ՝ շուտ շարժիր լայն թեւերըդ,
Ոստեր շինիր սըլուլիկ:

* * *

Մանիր՝ մանիր՝ իմ՝ ճախարակ,
Լիսեռնիկդ պտըտիր,
Մանիր թելեր հաստ ու բարակ,
Իլիկդ վերայ փաթաթիր:

* * *

Տիգրանիկս գուլբա չունի,
Հանգ է գնում ոտաբաց,
Փարրիէլս չուխա չունի,
Միշտ անում է սուգ ու լաց:

* * *

Մանիր՝ մանիր՝ իմ՝ ճախարակ,
Մանիր սիպտակ մալանչներ,

Մանիր թելեր հաստ ու բարակ,
Որ ես հոգամ իմ՝ ցաւեր:

* * *

Ձուալ չունինք, չաթու չունինք,
Ոչ նամոտէն, ոչ պարան,
Այսպէս աղքատ դեռ եղած չենք,
Կտրուել է ամեն բան:

* * *


Դեռ հարս էի՝ որ գործեցի
Քանի կարպետ խալիչա,
Բայց գրանցից շուտ գրկուեցի,
Հիմա չունիմ մի քէչա:

* * *

Կարմիր օրըս երբ սեւացաւ
Եւ պարտք մնաց թէեւ քիչ,
Պարտատիրոջ սիրտն էլ սեւացաւ,
Եկաւ տարաւ ամեն ինչ:

* * *

Մանիր՝ մանիր՝ իմ՝ ճախարակ,
Մանիր սիպտակ մալանչներ,
Մանիր թելեր հաստ ու բարակ,
Որ ես հոգամ իմ՝ ցաւեր:



ՍԵՐՄՆԱՅԱՆ.

Ահա եկան աշունքուայ թուզս օրերը,
Մաղմղում է մանարհատիկ անձրեւը.
Մառերն իրանց տերեւներից մերկացան,
Կռունկները շարան շարան անց կացան:

* *

Սեւացել է գաշտը անթիւ ցելերով,
Բայց մի կողմից դեռ վարում են կեռերով.
Սերմնացանը գողնոցն ածած սերմացուն,
Սերմ է ձգում, աղաչելով Ասարծուն:

* *

— Ով տէր Աստուած, դու իմ ցանքը պահպանես,
Առատ անձրեւ, կարմիր արեւ չըխնայես.
Մէկ բուռն ահա ես տալիս եմ մկներին,
Այս մէկ բուռն էլ ագռաւներին ծտերին.
Բայց մորեխը գոհ չի մնալ մէկ բռնով,
Երկու կըտամ թող կշտանայ դորանով.
Մէկ բան էլ կայ, որ անուներ չեմ տալիս,
Այդ դու գիտես, վերելից է նա գալիս.
Դու դրանցից արտըս պահիր անվնաս,
Ես տէրտէրից չեմ խնայիլ կալամաս.


Վանականներ, գործակալներ ինչքան գան,
Բոյորեքեանք առատ բաժին կըստանան.
Կերթամ Մարաս խունկ ու մոմոյ, մատաղով,
Միայն արտըս դու պահպանիր ապահով:

* *

— Էլ ի՞նչ ատեմ, Աստուած, ինքդ լաւ գիտես,
Թէ ինչ պարտքի պատուհասի մէջ եմ ես.
Գող, աւազակ մի կողմից են կողպաում,
Պարտքատէրը միւս կողմից է ինձ խեղդում.
Դրրանց ձեռքից եթէ մի բան է մնում,
Այն էլ գայլի կամ ցաւի է զոհ դառնում:

* *

— Մի տուն լիքը երեխէքս մերկ, քաղցած,
Տարին առատ, բայց ես չունիմ կորեկ հաց,
Յոյսըս ահա ոտքիդ տակին փռած է,
Գու Սուրբ Աջը սորա վերայ տարածէ:



ՀԱՅ ԱՂՋԻԿՆ ԱՂԲՐԻՆ (ՏԱՃԿՍ ՍՏՈՆՈՒՄ)

Աղբիւր, պարզիր՝ թուրքի տղին ջուր տանեմ,
Պարզիր, պարզիր, քրդի տղին ջուր տանեմ:

* * *

Աղբիւր, գիտե՞ս, թուրքը մեզ ի՞նչ է անում,
Մեզ ծեծում է, կոզոպտում է, ըսպանում,
Ի՞նչպէս անենք, որ ջուրն ընկնինք, որ պրծնինք,
Որ էլ այսպէս ըստրուկի գերի չը լինինք:

Աղբիւր, պարզիր՝ խանի տղին ջուր տանեմ,
Պարզիր, պարզիր, բագի տղին ջուր տանեմ:

* * *

Կար ժամանակ, որ մենք այսպէս խեղճ չէինք,
Մեզ պաշտպանող թագաւորներ ունէինք,
Թագ ու զէնքից, ազատ կեանքից զրկուեցանք:
Արիւն խմող թշնամու ձեռք մատնուեցանք:
Իէ՛հ շուտ պարզիր, թուրքի տղին ջուր տանեմ,
Պարզիր, պարզիր, քրդի տղին ջուր տանեմ:

* * *

Այս անգութին պէտք էր տուած ոչ ցուրտ ջուր,
Այլ տաք գնտակ կամ եռացած մի շամիրուր.
Բայց ձեռք չըկայ, որ հուր, երկաթ գործ դնէ,
Եւ մեր ազգը այս տանջանքից ազատէ:
Այժմ՝ պարզիր թուրքի տղին ջուր տանեմ,
Պարզիր, պարզիր, քրդի տղին ջուր տանեմ:



ՏՈՒԱՐԱՐԻ ԺԱՆՆԵՐ

Մի խամ տուարած,
Բաւական քաղցած,
Աղբրի մօտ նստած,
Ուտում էր չոր հաց

* * *

— Յամաք մի՛ ուտիր,

Ասաց ընկերը,

— Բա ինչո՞վ ուտեմ,

Ուրիշ բան չունեմ:

— Դանակով, եղբա՛յր...

Դանակով կտրիր,

Ջրումը թրջիր,

Էլ ցամաք չիլնիր:



ԲՈՍՏԱՆՉԻ

Ամառն է: Կարծես կրակ է բարձրանում
Գետնի երեսից եւ հուրհրատում:
Ո՛չ շունն է հաչում: Ո՛չ ճիճին երգում,
Գորտն էլ է լռել: Էլ չի կռկռում:

* * *

Ամենքն էլ փախել: Հով տեղ են գտել,
Իրանց բներում լռուել, պապանձել:
Միայն մի հատիկ մարդ է երեւում
Խորրնկած գաշտում: առուի եզերքում:

* * *

Կանգնած է մարգը արեւի տակին,
Ոտն ու ծունկը բաց: բահը դրած ուտին,
Մի շապիկ միայն ունի նա հագին
Եւ մի սպիտակ թատակ կայ գլխին:

* * *

— Բայց ի՞նչ մարդ է նա եւ ինչ է շինում,
Արեւի տակին ինչո՞ւ է այրվում:

— Նա բուտանչի է, բուտան է ջրում
Սեխն ու ձմերուկը նա է հասցրնում:



Ջիւն էր գալիս փաթիլ փաթիլ:
Հետն էլ անձրեւ կաթիլ կաթիլ:
Այդ միջոցին մի պառաւ կին
Հորթ էր փնտրում գաշտի միջին:

* * *

Կովը եկաւ տաւարիցը
Կուրծք ու ծծեր կաթով լիքը:
«Հորթուկս ո՞ւր է», նա բռնանչեց,
Խեղճ պառաւին լացացրրեց:

* * *

Մինչ դեռ այսպէս պառաւ ու կով
Ողբում էին լաց ու կոծով:
Յանկարծ լսուեց մի բարակ ձայն,
Կովն իմացաւ: որ հորթն է այն:

* * *

Կովը վազեց բռնանչելով,
Պառաւը յետնից տրնքտրնքալով,
Կորած հորթը մօրը գտաւ,
Լիք ծրծերը բերանն առաւ:

* * *

Մրժեց բոլոր կաթն ու տկզեց,
Տանտիկնոջը բան չը թողեց,
Բայց պառաւը այս անգամին
Սիրով ներեց չար հորթուկին:

506
0001

ԱՄԻՍՆԵՐ ԵՒ ԶՈՐՍ ԵՂԱՆԱԿ


Մարտը տալիս է ճնճաղիկ,
Ապրիլը կապոյտ մանուշակ,
Մայիսին բացվում է վարդը,
Սոխակը երգում անուշակ:

Յունիսը մեզ խոտ է տալիս,
Իսկ յուլիսը առատ ցորեն,
Օգոստոսը տանձ ու խնձոր
Եւ ուրիշ շատ հասուն մրգեր:

Սեպտեմբերը մեզ տալիս է
Խաղողի բոլոր տեսակը,
Հոկտեմբերը կարմիր գինին,
Նոյեմբերը բողկն ու տակը:

Դեկտեմբերին ձիւն է գալիս,
Յունուարին ծածկվում սար ու ձոր,
Փետրուարին սկսվում է
Փոփոխակի ցուրտ ու տաք օր:

Ահա այսպէս բոլոր տարին
Թաւալվում է չորս շրջանում,
Այս պատճառով չորս ժամանակ,
Զորս եղանակ է մեզ բերում:



ԶԱՂԱՅՊԱՆԻ ՆՆԶԱՐԱՆԸ

Երեք չորս հատ ջաղացաբար
Կարգով շարուած պտըտվում են,
Իրանց ահեղ գռգռոցով
Ամբողջ շէնքը գրդրում են,
Զանչախնների չըխկըրխոցից
Մարդի ականջ խլանում է,
Բայց ջաղացպանն ալրաթաթախ
Խոր քունն ընկած խռմիում է:

ԽՈԶԱՐԱԾԻ ԲԻՆԱ

Խիտ անտառի մութ խորքումը
Մի տեսակ խուզ կայ շինած,
Անդուռ, անպատ, անպատուհան,
Գերաններ են թեք գրած:

Յերեկն այնտեղ մարդ չի լինում,
Թէեւ լիքն է պաշարով,
Թուրքեր, քրդեր չեն մտնում,
Խուզը մնում է ապահով:

Միակ շէնքն է, որ ազատ է
Գող թուրքերից, քրդերից,
Որովհետեւ խողի մնի
Հոտ է գալիս նորանից:

ԱՍՏՈՒԾՈՅ ՀԱՆԱԳԸ

Մէկ անգամ Աստուած փերեւից կանչեց եւ մարգկանց յայտնեց, թէ այսուհետեւ ձեզ չեմ օգնելու, անձրեւ չեմ տալու:

Հէնց այս որ առեց, աղբիւրը լռեց. առուն ցամաքեց, վարդը թառամեց. անտառը դեղնեց, դաշտը սեւացաւ. մարգը սփրթնեց, արտը չորացաւ. անասուն եւ մարդ, թռչուն եւ գազան սաստիկ երկիւղից ուշաթափ եղան:

Աստուած որ տեսաւ, թէ ինչ բան եղաւ, ծիծաղը եկաւ եւ ծիծաղեցաւ: Բայց ի՞նչպէս ծիծաղ... Այնպէս որոտաց, որ երկինք գետինք թնդաց, դղրդաց. ամպերը իրար այնպէս զարկուեցին: որ փայլակ, կայծակ, շանթեր հանեցին: Երկինքը մթնեց, յորդ անձրեւ թափեց, նդաւածներին թրջեց ողողեց եւ ուշքի բերեց:

Եւ այնուհետեւ սար ու ձոր զարթնեց. աղբիւրը քրքրաց, շուշանը ծաղկեց. առուն քրքրչաց, արտը կանաչեց. արտուտը երգեց, աքլարը կանչեց. հաւը ձուածեց, մաքին գառ ծնեց: Գառը մորթեցինք Աստուծոյ համար, որ մեզ խնայի՝ էլ հանաք չանի:

ԹՈՅԼ, ՏՂԱՅ

Թորոսի որդին մի ծոյլ տղայ էր, ոչ գիր էր սովորում եւ ոչ մի արհեստ:

— Ի՞նչ արհեստ սովորմ, փնթփնթում էր նա, — կրեկչութիւնը շատ լաւ արհեստ է, բայց բոբիկ ոտքով ամանում կանգնել, արագ պտուտել, այդ այնքան հեշտ չէ: Աւելի հեշտ է փուքսի փչելը, բայց այդ իմ ձեռքում երկար չեն թողնիլ: Վարպետ էլ դառնամ, ինչ եմ անելու. պէտք է մատներով փոքր ինչ բամբակով տաք տաք պղնձին նաշագիր քսեմ, ձեռքերս այրեմ: Չէ, այդ իմ բան չէ:

— Գարբնի մօտ կերթամ: այնտեղ էլ փուքս կայ, ձմեռն էլ տաք է. բայց մեծ ուժ պէտք է այդ դործի համար: Ահագին մուրճով երկաթը ծեծել, որ նա տափակի, ես այդ չեմ անի: ինչ կուզի լինի:

— Նայեանդ ը լաւ է. մեխի ծայր սրել եւ պայտեր շտկել. այդ շատ դժուար չէ. բայց մէկ ամեհի ձիու ոտք բռնել, ծնկանը դնել, երկիւղալի է. ձիու աքացին իմ ընկերների ապտակից թունդ է: Չէ, իմ կարծիքով այդ իմ բանը չէ:

— Գերձակութիւնը մաքուր արհեստ է, լաւ միտս ընկաւ: Բայց ի՞նչ եմ ասում: ամբողջ օրերով ծալպատակ նստել, գլուխ քաշ գցած՝ կա-

րելը ու կարել, ոչ խաղալ կը լինի եւ ոչ վազվը-
զել: Զէ՛, այդ էլ բան չէ:

— Ինչո՞ւ չը գնամ որմնադիր դառնամ;
բարձր պատերի ծայրերին կանգնեմ: այնտեղից
կանչեմ— «Քար ու կի՛ր տուէ՛ք, ցե՛խ ուղարկե-
ցէ՛ք, աղի՛ւս ձգեցէ՛ք»: Այսպէս կը գոռամ եւ
կը հրամայեմ, որ աշխարհք տեսնի, թէ ես
վարպետ եմ: գործս լաւ գիտեմ: Բայց վայ թէ
յանկարծ այդ բարձր տեղից ոտքս սկըհի եւ
թրմիալով ներքեւ գլորվեմ: հոգիս աւանդեմ:
Զէ՛, այդ հեշտ գործ չէ, եւ ոչ իմ բանն է:

— Երեւի չը կայ մի այնպէս արհեստ, որ
ես հաւանեմ, գնամ սովորեմ: Թէ՛ գիւրգեար
դառնամ, ոտքս կը կտրեմ: կօշկակար դառնամ,
ձեռքս կը ծակեմ: ոսկերիչ դառնամ: մատներս
կայրեմ: թէ բրուտ դառնամ: ցեխ պիտի կոխ
տամ: վարժարան գնամ: գիր պիտի սովորիմ:
Զէ՛, իմ կարծիքով՝ ամենից լաւն է, ամենից
հեշտը ոչ—ինչ չը շինել, ոչինչ չը սովորել:

Մեր տուած փայտից կրակ են անում: տուն տա-
քացնում, թոնիրը վառում, կերակուր եփում,
փափուկ հաց թխում, ուտում կշտանում, բայց
մեզ չեն յիշում, մեզ չեն պահպանում: այլ ան-
գուլթ կերպով մեզ կոտորում են, մեզ փչաց-
նում: ոչնչացնում:

Մեր գերաններից շինում են տներ, գոմեր,
մարաքներ, ժամեր ու վանքեր. մեր տախտակ-
ներից՝ յատակ, առաստաղ, աթոռ, պահարան,
սեղան, նստարան, դուռ ու պատուհան եւ այլ
շատ տեսակ կահ եւ կարասիք. բայց մեզ չեն
յիշում: մեզ չեն պահպանում: այլ անգուլթ կեր-
պով մեզ կոտորում են, մեզ փչացնում: ոչնչ-
ացնում:

Կամուրջ են շինում, գետերով անցնում:
սայլեր են շինում: ամեն ինչ կրում: գուլթան
են շինում: հողերը հերկում: լուծ, սամի շինում:
եզ, գոմէշ լծում: օրօրոց շինում: մանկիկ օրօ-
րում: քանոն են շինում: տետրակներ տողում:
նաւեր են շինում: ծովի մէջ լողում: Բայց մեզ
չեն յիշում: մեզ չեն պահպանում: այլ անգուլթ
կերպով մեզ կոտորում են մեզ փչացնում: ոչնչ-
ացնում:

Ո՞ր չի տանձ կերել, կամ կարմիր խնձոր:

նուռ ու սերկեւիլ, կեռաս ու սալոր. դեղձ կար-
մրաթշիկ, ծիրան անուշիկ, Ապա խաղողը՝ եւ
քանի՞ տեսակ. կանաչ ու կարմիր, թուխ թուխ
ու սպիտակ. եւ այդ ամենը մարդիկն են ու-
տում. . . . Բայց մեզ չեն յիշում, մեզ չեն պահ-
պանում, այլ անգութ կերպով մեզ կոտորում
են, մեզ փչացնում, ոչնչացնում:

Խելօք մանուկներ, դուք որ մեծանաք, մեծ
մարդիկ դառնաք, մեզ խնայեցէք, մեզ պահպա-
նեցէք, եւ ձեր հանդերում, ձեր այգիներում
ծառեր տնկեցէք. . . .

ՄԵՂՈՒՆ ՈՒ ԱՂԱՒԵՒՆ.

ՓՈՐՁԱՆՔ

Փրաջան մեղուն ծաղկալից դաշտում իր մեղ-
րի համար նիւթ էր հաւաքում: Արեւի տակին
շատ աշխատելով նա բեզարեցաւ եւ ծարաւեցաւ:

Նորանից մօտիկ մի փոքրիկ լիճ կար:
Մօտեցաւ լճին, վէր եկաւ. ափին, որ քիչ ջուր
խմի, ծարաւը կտարի, նոր ուժ ըստանայ, թռչի
տուն գնայ:

Հէնց որ կռացաւ, որ ջուր կու՛մ անի, յան-
կարճ գլորուեց, ընկաւ ջրի մէջ:

Նա շատ աշխատեց, որ ցամաք դուրս գայ,
բայց մի փոքր աչիք նորան ներս քաշեց, ափից
հեռացրեց:

Այսպէս խեղճ մեղուն ցամաքից զրկուեց,
ջրի երեսին թեւերը փռեց եւ յոյսը կտրած,
մնաց մեկնուած:

ՓԳՆՈՒՓԻՆՆ

Արտեղից որտեղ, օգնութեան հասաւ մի շատ
բարեսիրտ սիրուն Աղաւնի: Բարի Աղաւնին մօ-
տեցաւ լճին եւ նայեց տեսաւ մեր խեղճ Մեղու-
ին՝ յուսահատ փռուած ջրի երեսին: Իսկոյն ըշ-

տապեց, մի տերեւ կոցեց եւ բերաւ Մեղուի առջեւը ձգեց:

Մեղուն բարձրացաւ տերեւի վերայ, խելքը ժողովեց, դեռ ու գէն նայեց, որ տեսնի ով էր իր ազատողը: մահից փրկողը: Եւ տեսաւ իր մօտ բարի աղաւնուն: Շատ նայեց վերան եւ ուզեց խօսել, Աղաւնուն գովել, շնորհակալ լինել, բայց մեր բարեսիրտ սիրուն Աղաւնին շատ լաւ իմացաւ Մեղուի միտքը եւ ոչինչ չուզեց լսել նորանից, այլ թռաւ գնաց, որ ուրիշ տեղ էլ նոյն բարիքն անէ:

ԵՐԱՆՍԱԳԻՏՈՒԹԻՒՆ

Մի օր մեր մեղուն նոյն դաշտի միջին մի սիրուն ծաղկից նիւթ էր ժողովում եւ տղտղալով Աղաւնուն գովում: Մեղուի հանդէպ, մի ծառի վերայ նստած ննջում էր ծանօթ Աղաւնին: Հէնց այս ժամանակ Մեղուն նկատեց, որ ահա մէկ մարդ, հրացանը ձեռին, մէջքը կռացրած, չար օձի նման սողում է սուս փուս դէպի Աղաւնին: Մեղուն հասկացաւ, որ դա չար մարդ է, անգութ որսորդ է, ուզում է սպանել անմեղ թռչունին, իր բարերարին: Եւ ճշմարիտ որ այդ էր այն մարդու չար նպատակը:

Որսորդը չոքեց, տեղը պնտացրեց եւ հրա-

ցանը երեսին բռնեց: Հէնց մատը գրեց կայծառի ոտքին եւ ուզեց քաշել, գործը վերջացնել, այդ իսկ րոպէին կայծակի նման Մեղուն վրայ հասաւ եւ չար որսորդի ձեռքն այնպէս խայթեց, որ նա վեր ցատքեց: Նորա հրացանը նշանից շեղուեց եւ իր թնդիւնով անմեղ Աղաւնուն քնից զարթեցրեց եւ տեղից թռցրեց:
Այսպէս մեր Մեղուն իր բարերարին վերահաս մահից փրկեց ազատեց:



ԱՍՏՈՒԾՈՅ ՊԱՀԱԾ ԳԱՌԸ

ԳԱՅԼԸ ԶԻ ՈՒՏԻԼ

1.

Անտառի խորքում մի ճօճ կար կապած եւ նրա մէջ մի մանուկ գրած: Լաց էր լինում մանուկը: Մայր չըկար մօտը, որ ծիծ տար. հայր չը կար, որ պահպանէր: Անտառն անմարգաբընակ էր:

Մի դժոտ պախրակով կաթնալից կրծքով եկաւ ճօճի մօտ իր հորթուկի հետ եւ տխուր ձայնով երեխին ասեց—

Սիրուն երեխայ, սրբ ես մնացել,
Քո՛ անբախտ մօրը գերի են տարել,
Նա գնաց, կորա՛ւ, էլ յետ չի գալու,
էլ ոչ մի անգամ քեզ ծիծ չի տալու.
Նա քեզ փաթաթեց լայն տերեւներով,
ճօճի մէջ կապեց նանիկ ասելով,
Նա լաց էր լինում ազի արցունքով,
Իր վերջին նանիկն ասում էր լալով—
— Նինի, բալիկ, նինի,
Մեծատերեւ՝ թաթաշոր,
Մանրատերեւ՝ ոտաշոր.
Քամին կանի ժաժ կրտայ,

Պախրան կը գայ ծիծ կը տայ.

Նինի, գառնուկ, նինի:

Ահա եկել եմ որ քեզ ծիծ տամ ես,

Պահեմ պահպանեմ իմ հորթուկիս պէս

2.

Պախրան ծիծ տուաւ երեխին: Երեխան կշտացաւ ու քնեց: Պախրան իր հորթը թողեց երեխի մօտ, ինքը գնաց արածելու, որ կաթը շատացնի եւ գայ երկուսին էլ ծիծ տայ:

Հորթը մնաց երեխի մօտ, օրօրեց նրան եւ նանիկ ասեց—

Նինի՛, մանկիկ, նինի,
Իմ մայրը քո մօր նման չի,
Ամեն խոտից կծիլ չի,
Ամեն ջրից խմիլ չի,
Ամեն տափի նստիլ չի,
Նա սարէսար ման կը գայ,
Որբ կը գտնի, ծիծ կը տայ:
Նինի՛, մանկիկ, նինի:

Պախրան կուրծքը լիքը յետ դառաւ արօտատեղից եւ ծիծ տուաւ երեխին էլ, հորթին էլ: Ով որ տարով կը մեծանայ, մեր երեխան օրով մեծացաւ: Շատ չանցաւ, նա դուրս եկաւ ճօճիցը. մի օր չորեքթաթ տուաւ միւս օրը ոտքի կանգնեց: Մի քանի անգամ սկըհաց, վէր

ընկաւ, բայց շուտով ամբացաւ եւ սկսեց պախ-
րի ետեւից վազվղել:

3.

Թագաւորին որդի չէր լինում: Երազումն
ասացին. «Թագաւոր» Աստուած քեզ մի որդի
պիտի տայ անտառի խորքումը»:

Մէկ անգամ անգլաւակ թագաւորը որսի գնաց
իր որսորդների հետ: Շատ ման եկան, ոչինչ չը-
գտան, ոչ մի որսի չպատահեցան: Բայց որ հասան
անտառի խորքը, այնտեղ մի պախրի հետք գը-
տան եւ նրա մօտ երեխի ոտնատեղեր: Ամերը
մնացին զարմացած եւ չէին հաւատում, որ ե-
րեխի կըլինի ոտնատեղերը, բայց թագաւորը
խկոյն յիշեց իր երազը եւ հրամայեց որսորդ-
ներին, որ երեխի հետքը քշեն, եւ ուր որ լինի,
գտնեն նրան:

Որսորդները գնացին եւ երկու ժամ չան-
ցած, մի սիրուն տղայ բերին թագաւորի մօտ
եւ պատմեցին, թէ ինչպէս գտան նրան պախրի
ծիծը ծծելիս...

Թագաւորը շատ ուրախացաւ: Երեխին գը-
կեց, համբուրեց եւ անունը դրաւ Պախրատուր:

Պախրատուրը մեծացաւ թագաւորի պալա-
տումը, լաւ ուսում առաւ, վերջը դառաւ թա-
գաւոր եւ մեծ զօրքով գնաց իր մօրն ազատեց
գերութիւնից:

ԱՌԱՒՕՏԵԱՆ ԱՂՕՐԳ

Ով տէր մեր զթոտ,
Գու լոյս առաւօտ,
Ծագիր և մեզ մօտ
Քո լոյսդ անաղօտ:

Թող լուսաւորուին
Մեր միտքն ու հոգին,
Որ քո լոյս անուան
Լինինք փառաբան:

Handwritten note:
Վազեապետ
Երեմի
Գրք

ՄԱՆՈՒՇԱԿ ✓

Սիրուն մանուշակ, ինչո՞ւ ես թողածի,
Կապոյտ աչիկներդ ինչո՞ւ ես փակելի,
Քեզ ո՞վ նեղացրեց, ո՞վ վատ բան ասեց,
Քո անուշ հոտովդ ո՞վ չի զմայլեց:

* * *

—Սիրուն մանուկներ, դուք ինձ սիրեցիք,
Իմ ծաղիկներից փնջեր կապեցիք:
Բայց կոշտ ձեռներից, կոպիտ ճանկերից
Ինձ չազատեցիք, չը պահպանեցիք:

* * *

Քնքոյշ սրտերը շուտ են կոտրվում,
Քնքոյշ ծաղիկները՝ շուտով թառամում,
Քանի որ անխիղճ մարդիկ կը լինին,
Երկար չեմ ապրիլ ես այս աշխարհում:

Վ Ե Ր Զ.



ԳԻՆՆ Է 20 ԿՕՊ.

Վաճառվում է Վ. Շաճվերգեանի Լրագրական
Գործակալութեան խանութում:

Նոյն տեղ վաճառվում են Վ. Շաճվերգեանի
Գործակալութեան լետեւեալ հրատարակութիւնները:
ԹՈՒՍ.ԲԱՆԱ.ԿԱՆ ԽՆԳԻՐՆԵՐ Վարձեւեանի
մասն առաջին զինն է 40 կօպ:

КРАТКАЯ ФРАНЦУЗСКАЯ ГРАММАТИКА
Стадлина И. 50 коп.

Մամուլի տակն է և դուրս կը գայ մինչև
Սեպ. Վարձեւեանի ԹՈՒՍ.ԲԱՆԱ.ԿԱՆ ԽՆԳԻՐՆԵՐԻ
երկրորդ մասը:

Բ. Հ Ա Հ Վ Ե Ր Գ Ե Ա Ն Ի

Լրագրական Գործակալութեան խանութում Թիֆլիզում
(Газетное Агентство В. Шавердова въ Тифлисе)

Վաճառվում են ամէն տեսակ գրքեր՝ թէ դասա-
կան և թէ գրականական Հայերէն, Ռուսերէն և զմնազան
Ներսիական լեզուներով:

Լրագրական Գործակալութիւնը ընդունում է
նպէս բաժանորդագրութիւն՝ թէ տեղական, թէ արտասահման
և թէ արտասահմանեան բոլոր պարբերական թերթիքների
համար նոյն իսկ խմբագրական գներով:

Բ. Հաճվերգեանի Լրագրական Գործակալութիւնը
ընդունում է ամէն տեսակ յայտարարութիւններ բոլոր
պարբերական թերթերի մէջ տպելու համար ինչպէս
Ռուսաստանի նոյնպէս և արտասահմանեան:

Օտարաբաղադրացիները իրանց պատուէրները ուղ-
ղում են՝

Тифлисъ, въ Газетное Агентство В. Шавердова.

2123

0006409

2013

ԴԲ Ազգային գրադարան



NL0006409

